ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

"10" "օգոստոսի" 2017թ.

№ 17/179

ՀՀ Սյունիքի մարզի մարզպետ
պարոն Վահե Հակոբյանին

Հարգելի պարոն Հակոբյան,

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպությունը 2007 թվականից շարունակաբար իրականացնում է ՀՀ պետական գնումների համակարգի մոնիտորինգ:

ՀՀ կառավարության 2017թ. փետրվարի 16-ի թիվ 153-Ն որոշմամբ Սյունիքի մարզպետարանին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 22,200.0 հազար դրամ՝ Հայաստանի Հանրապետության մարզերի՝ առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի 1 կետով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով ամրագրված տեղեկացված լինելու մեր իրավունքը, խնդրում եմ տրամադրել վերը նշված հատկացման սահմաններում մեկ անձից գնում կատարելու դեպքում ընթացակարգի ընտրությունը հիմնավորող փաստաթղթերը (հիմքերը):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով,

Վարուժան Հոկտանյան
ծրագրի ղեկավար

Հայաստան, Երևան, 0019, Անտառային փողոց, տուն 164/1,
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
Ֆաքս՝ (374 10) 569519
info@transparency.am • www.transparency.am